

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տ է լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.  
Տ է լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## «ՄԵԼԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարեկան վերջը կարժեհայ Վեճ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղորօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

## ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական պատգամաւորութիւն. Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՆԻՍԻՆ. Մամուլ. Ալեքսանդրօպօլի ընտրութիւնների արթիթով. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. — Հ. ՌԱԳԻՐ. ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Երևանի նահանգի ծանր դէպքերը և ազգաբնակչութեան ժամանակ. կից կարեւոր կարիքները մեծ մասնաւորութիւն էին պատճառել թէ Թիֆլիսի և թէ ուրիշ տեղերի հայերին: Թիֆլիսում տեղի ունեցան հայերի մի քանի խորհրդակցութիւններ, երբ գտնուեալ նրկայ ծանր հանգամանքներէն և ապահովելու ժողովրդի կեանքը և ստացուածքը:

Իբրև հետևանք այդ խորհրդակցութիւնների հայերը գտնադրան անձերի միջոցով դիմումներ արին պաշտօնակ ն աստեաններին, կազմակերպեցին աղետից փրկուածներին օգնելու նպատակով միմիք, հազուադէպ, զեղբեր հայթայթելու, բժշկական օգնութիւն հասցնելու գործը և միջոցներ ձեռք առան մանրամասն ներքին ժողովելու լիակատար տեղիկազմը կազմելու համար աղետի մասին:

Բայց զօրազօր դէպքերի յաճախ կրկնվելը և աղէտի բեծի ընդարձակումը չէին կարող հանգստութիւն տալ ոչ ոքի:

Միտք ծագեց դիմում անել կողմակցան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին և ներկ յայտնել նրան մի յիշատակագիր:

Հայերի մի պատգամաւորութիւն, բաղկացած 15 անձից, յայտնեց իր դիտաւորութեան մասին Փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Դիլիշին, որը տեղեկացրեց, որ Փոխարքան պատգամաւորութեան համար յատուկ ընդունելութիւն է նշանակել չորս երջարթի, յունիսի 1-ին:

Պատգամաւորութեան կազմի մէջ մտել էին գլխավորապէս այն անձի, որ մասնաւոր զինք երկու ամիս առաջ ժողովված Թիֆլիսում, մշակեցին հայկական հանրագիրը:

Փոխարքան ընդունեց պատգամաւորութիւնը սիրալիր կերպով, ծնթացաւ զրաւոր յիշատակագրի հետ, լսեց պատգամաւորութեան անդամների բացատրութիւնները և խոստացաւ իր կողմից ամեն միջոց գործ դնել բաւարարութիւն տալու պատգամաւորութեան ներկայացրած յիշատակագրի կէտերին:

Հետևեալ համարում մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին յիշատակագրի և եղած խօսակցութիւնների հետ:

## ՎԵՐՋԻՆ ՏԵՆԻՍԻՆԻՆԵՐ

Ղամարուից հաղորդում են, որ մայիսի 28-ին մի խումբ զինված թուրքեր ու քիւրդեր անցնում էին Նրասխը, որպէս զի մասնէն ռուսական հողը Ղամարուի մօտերը: Սահմանապահ զինւորները, անցնողներին հրամայեցին յետ դառնալ: Երբ զգուշացուեց 3րդ անգամ կրկնում են և

չուրն անցնողները չեն լսում, զինւորները միահամուռ կրակ են բաց անում նրանց վրա. 3 հոգի սպանվում են, 6 հոգի վիրաւորվում: Դրանից յետոյ ամբողջ վերադառնում է պարսկական ամբողջ զորքը:

Երևանի մեր թղթակից Ա.—Դո մայիսի 30-ին ուղարկել է հետեւեալ հաղորդագրութիւնը.

Այսօր, երկուշաբթի, խոսվում էր հայերի սկսվելու ուղիղ ութերորդ օրը նոյնպէս անցկացրինք անգործունէութեան և լարված դրութեան մէջ: Յուզմունքներ, խռովութիւններ, հրացանաձգութիւնների և սպանութիւնների—մի խօսքով զինւորութեան այս երկար ու ձիգ ութին օրերը այնքան կոպտացրել ու բիրտացրել են մեզ զգացմունքները ու բարքերը, որ սպանութիւնները սովորական երևոյթներ կարգին են անցել և նրանք լսվում ու մտնացվում են վայրկեանապէս: Այսօր առաւօտեան հայերի մէջ տեղի ունեցաւ մի սպանութիւն, մի ժամից յետոյ տեղի ունեցաւ երկրորդը, բայց կարճէք զինւորական դատարանի վճռով:

Մի երևանցի—Չարգար Համբարձում—Բագուի տաճարից նկատելով անցնող մի երիտասարդի, առաջարկում է նստել և իր հետ խմել: Երիտասարդը մերժում է: Հարեցողութեան և անկարգութիւնների մէջ ճանաչված Բագուի երկրպագուն, առանց այլ և այլութեան, հանում է ատրճառակը և մի քանի անգամ պարպում երիտասարդի վրա ու տեղի ու տեղ սպանում նրան և որպէս զի կարողանայ իր յետնանքը ծածկել՝ դաշոյնով վիրաւորում է նաև իրան և վազ տալիս հիւանդանոց:

Այս լուրը բազմապէս տարածվելով բազմիք բոլոր ծայրերը, զայրոյթ առաջ բերեց. այս ծանր բազում հայը սպանում էր հայի և այն էլ զինւոր հայի, այսինքն խոսվում էր ժամանակի դիմադրութեան ժամանակի դիմադրութեան հոգի: «Այանի մարդասպանի», աղաղակում էր իւրաքանչիւրը, աղաղակում էր նաև ամբողջութիւնը: Եւ ժողովրդի այդ վճիռը գործադրեց, ընդամենը մի ժամ անց, երբ մարդասպանը վերքը կապած դուրս էր գալիս՝ հիւանդանոցից՝ չէմքի մէջ դաշոյնի մի հարո ածով սպանվեց: Այս լուրը ժողովուրդը լսեց խղճի հանգստութեամբ, շատերը, ասում են, գալիս էին թրում գիւղի վրա և անցնում: Այս արիւնշալի շուրջ թվայ դատարարութիւնը և կրթութիւնը:

Մեր երէկվայ հաղորդագրութեան մէջ մի սխալ մտաւ. Շէյխ-ու-Իսկանդեր Նախիջևանից այստեղ հասաւ ոչ թէ երէկ երեկոյան, ինչպէս որ հաղորդեցինք, այլ այսօր առաւօտեան գնացքով Կարապետ վարդապետի հետ միասին:

Այսօր նահանգապետի մօտ խորհրդակցութիւն տեղի ունէր, երկու հոգեւրականներ. Շէյխ-ու-Իսկանդեր, Կարապետ վարդապետի և նախորդ օրվ յ հաշտութեան մասին խորհրդակցող երկու կողմերի չորս ներկայացուցիչների մասնակցութեամբ: Ինչպէս լսեցինք, հաշտութեան միջոց համարել են դարձեալ նոյն թափուրը, որպիսին այս տարի տեղի ունեցած նախ Բագում և ապա Երևանում: Եթէ այդպիսի թափուրներ ցանկալի հետևանք առաջացէին, մենք տուեցինք որա ամենալաւ օրինակը, երբ մի շտէլիքի մասնական օրերին խանութները սղոյթելով երեք հազարի չափ ժողովրդով մզկիթ գնացինք ցաւակցութիւն յայտնելու և ինչ չեւ այսօր փխսանակ փխսաբարձ համակրանքի մեք ենթ րվելցինք յարձակման: Ուրեմն ինչ միտք ունեն այդպիսի թափուրները: Այսպէս դատում է ժողովուրդը, և այսպէս է դատողութեան տրամաբանական ձևը:

Այսօր Նախիջևանից վերադարձաւ Երևանից գնացած վիրաւորներին և կարտեաներին նպաստող սանիտարական խումբը. նրանք սոսկալի բաներ են պատմում Նախիջևանում և նրա շրջակայ գիւղերում տիրող թշուառութիւնների մասին: Օգնութեան գործը պէտք է կանոնաւորել, այլապէս յուսահատութիւնը առաջ կը բերէ դաղթականութիւն: Անհրաժեշտ է օգնութիւն և յուսադրող ինտելիգենտ ուժերի ներկայութիւն, որ կարելի լինի լքումը մեղմել: Թէ որ աստիճանի է եղել սարսափը, բաւական է արձանագրել այն փաստերը, որ քրիստոնեայ պետութեան մէջ հայը գիւղի է կրօնափոխութեան, ընդունելով մահմեդականութիւն:

Այս րօպէին լուր է ստացվել Արաքսի միւս ափին ընկած Ալիզա գիւղից, որ սպանվում է քիւրդերի յարձակումով: Բոլոր մուր տարրերը միաբանվել են. հայ ժողովրդին հացի չափ անհրաժեշտ է զինվելը. պաշտպանութեան այլ ձև այժմ գոյութիւն չունի:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒՆԻ

Շարունակում ենք պ. Գոլուխանեանի յօդուածի թարգմանութիւնը:

Պ. Աղանի արձանագրում է մահմեդականների և մի անկախաձեռն արժանաւորութիւն է: Իրանց մեղքը բաշտութիւնը, ցանկութիւնը քաւել այդ մեղքը անկեղծ կերպով, առանց յետին մտքի, հաշտվել հայի հետ... Մահմեդականները ճանաչեցին իւրան խոստաւախութիւնը, հասկացան, թէ որքան ստոր էր նա, զղջացին, ողբացին, անկեղծօրէն, առանց յետին մտքի, թողութիւն լրագրեցին հայերից, մեկնելով նրանց եղբայրական ձեռքը:

Այդպիսով արժանի մեծարանքներ մատուցանելով մահմեդական ինտելիգենցիային և մահմեդական անուանի մարդկանց, պ. Աղանի, ճրմարտախօս տարեգրի գերկատարելով, չէ կարող գուզնթացաբար չը շօշափել և հայերի գործողութիւնները: Ինչ էին անում հայերը այն ժամանակ, երբ մահմեդականները զգալիված էին ազգաբնակչութիւնը խաղ դացնելով, նրան ներշնչելով այդպիսի կատարածի ամբողջ եղբայրական գարշելութեան դիտակցութիւնը:

Անա ինչ էին անում.

Գտնվեցին հայեր, որոնք սարքեցին լրագրական աղիտացիա, տարածելով աշխարհի բոլոր կողմերը ամենատարող, հրէշաւոր չափերով չափազանցած հեռագրութեան... Հայերը աշխատում են իրանց բաժին խաշտաւորութիւնն էլ անցկացնել թուրքերի վրա... Եւ այս բոլորը այն իսկ անձանց դէմ, որոնք հետ համբուրվում են, որոնց հաւատացնում են եղբայրութեան և միութեան մասին: Անարժան և անաղիք բան է—բացականչում է պ. Աղանի—մի կողմից կազմակերպել եղբայրութեան կոմիտեներ, իսկ միւս կողմից խմբագրութիւններին «գոլուխաններ» տալ:

Ուրեմն խօսքերով, հայերը երգեցողութիւն են և մասնիկներ, որոնք ցնացնում են մահմեդականներին յուրաքանչեան համբոյններով, իսկ իրանց լոկի միջիկ ամեն տեսակ որդալիներ են լարում:

Զարուհելի մեղադրանք և եթէ նա իսկապէս սաղ գար հայերին, ես ամօթից պէտք է այլվէն իմ հայրենակիցների համար, բայց, բարեբախտաբար, պ. Աղանի մոլորվում է և այս անգամ:

Հայերը ոչ որքին չեն մատնել, չեն դաւաճանել, ոչ ռքին չեն խաբէ: Նրանք գործել են բոցաւձակ և շիտակ: Նրանք վճռել են պարզիկ ճշմարտութիւնը—ճշմարտութիւն, ինչ որ էլ լինի—և շարունակում են ձգտել այդ բանին մինչև այսօր: Այս բանը նրանք երբէք և ոչ որքին չեն թագգրել: Այս մասին նրանք բարձրաձայն խօսում էին միտնեցնելով, յայտարարում էին զանազան հասարակական հիմնարկութիւնների և իւր մեքի որդալիներ մէջ, հանրագրերի և միջնորդութիւնների մէջ հեռագրութիւնների և լրագրական յօդուածների մէջ, վերջապէս մասնաւոր ժողովների և խօսակցութիւնների մէջ: Հայերը իրանց համարում են վերա-

ւորված կողմ, որ ենթարկվել է վայրենի և ոչ մի բանով չարգարացվող յարձակման և բաւարարութիւն են պահանջում:

Հայերը համբուրվում էին մուսուլմանների հետ, սեղմում էին նրանց ձեռքը, եղբայրանում էին նրանց հետ և պատրաստ են այդպէս անել և այսուհետեւ, որովհետեւ առաջ էլ, այժմ էլ այն համոզմունքի մէջ են, որ մահմեդականները առհասարակ մեղաւոր չեն հայերի վրա գաղթի յարձակում գործելու մէջ:

Հայերը ուղղում են, ոչ յանցաւորները առհասարակ չէին և խոստաւորվում: Նրանք այլ բան չէին անում և ոչ միայն հասարակական վաղված խիղճը հանգստացնելու համար, այլ և որովհետեւ չը կայ մի ուրիշ ճանապարհ իսկական հաշտութիւնը և իսկական եղբայրութիւնը վերականգնելու:

Ընթանալով այս ճանապարհով, որ միանգամայն որդալի գծով է անաղիք իսկ բայցից, հայերը յոյս ունէին թէ կը գտնեն մահմեդականների կողմից համակրանք և աշխատութիւն և ոչ թէ դիմադրութիւն: Բայց կարելի է կարծել, որ բոլոր մահմեդականները չեն ընդունում հայերի այս հայեցակէտը, չեն ընդունում դոնէ ոչ ամենքը այն անձներին, որոնց պ. Աղանի անուանում է «մահմեդական ինտելիգենցիա և անուանի մարդիկ»: Իրանք, իսկ զբանց այժմ միանում են պ. Աղանի—ապագայ հաշտութեան և բարօրութեան իւրանց ծրագրերը ձեւակերպում են սոսկաւ. եթէ ուզում էր եղբայրութիւն, պիտի մոռացութեան տաք ամբողջ անցեալը: Մոռացում և ներում, ներում և մոռացում,—անա՛ ձեր առջև փրկութեան միակ ճանապարհը: Ոչ որքին և ոչ մի բան դուք չը պիտի մերկացնէք: Դուք չը պիտի հարց տաք «մի է մեղաւոր»: Դուք չը պիտի ասէք. «մենքը մեղաւոր են, կամ, որ մի և նոյն է, ոչ որ մեղաւոր չէ: Դուք չը պիտի ճշտատեք, որ ճշմարտութիւնը բազմի, ընդհակառակ, եթէ մի բան էլ պատահաբար իմանաք, պիտի լռեք: Որովհետեւ բաւական է, որ դուք դատի ենթարկել տաք դոնէ մի հատ մեղաւորի, և մեր եղբայրութիւնից հետք անգամ չի մնալ:

Այն, եղբայրութեան այսպիսի մի ձեւակերպութիւն հայերը ընդունել չեն կարող: Եւ դրա հետ միասին համոզված են, որ իրանք հաշտութեան և միացման գաղափարը դաւաճաններ չեն: Հայերը չեն կարող համաձայնվել հաշտութիւն գնել սուտ վկայութեան և թագցնելու գնով, չեն կարող նախ այն պատճառով, որ նրանց տեսակէտով դա չէ համապատասխանում մարդու արժանաւորութեան և երկրորդ, որովհետեւ այդպիսի գնով գնված խաղաղութիւնը ամեն մի կուցի վրա է:

Հայերը հաստատ համոզված են, որ իսկական, անկեղծ խաղաղութիւնը կարող է մտնել միայն այն ժամանակ, երբ կը գտնվեն խաղաղութեան խանգարողները, զբաւվեն և զինաթափ լինեն:

Պ. Աղանիին այս բանը, ըստ երևոյթին, շատ դուր չէ գալիս: Բայց դա արդէն իր, պ. Աղանիի գործն է: Հայերը այս դէպքում իրանց թոյլ չեն տալ ի նկատի չառնել նրա ճաշակը:

Շատ մահմեդականներ,—հալարտութեամբ պատմում է պ. Աղանի—իրանց մօտ ապաստարան տուին հայերին, իսկ հայերը, շարունակելով է նա վերջովված,—այդպիսի բան չարին:

Միանգամայն օրինական հալարտութիւն իսկ ինչ վերաբերում է վրդովմունքին, պ. Աղանի, անկողմնապահութեան շահերը պահելու համար, կարող էր և հեռու մնալ նրանից:

Հայերը իրանց աներում մի հատ մահմեդական ընտանիք չը պատասխարեցին: Զը գիտեմ, այսպէս է. թող եւ տալիս, որ այդպէս եղել է: Թոյլ եւ տալիս, որովհետեւ մահմեդական ընտանիքն իրին կարիք չը կար պատաստան որոնել հայոց տներում: Հայերը միայն փողոցներում էին սպանում, իսկ տներին վրա նրանք չէին յարձակվում, չէին պաշարում նրանց, չէին սպանում... Այդ անում էին մահմեդականները: Մահմեդական ընտանիքներին հարկաւոր չէր օրհան և պաշտպանութիւն որոնել հայերի մօտ: Նրանք անվտանգ էին և իրանց տներում:

Բայց շատ մահմեդականներ պաշտպանեցին և պատասխարեցին հայ ընտանիքները: Պ. Աղանիի հետ, մահմեդական սղգարմաւորութեան մի մասի սյա ճշմարիտ մարդաբարկան վերաբերմունքը զէպի հայերը պատրաստ եմ հաստատել և ես,—ճիշդ է, առանց հալարտութեան, բայց անկեղծ բա-

ւականութեամբ և մեծ շնորհակալութեամբ և բայց գիտե՛ք պ. Աղանիկը թէ ովքեր են այդ մահմեդականները: Դրանք էին այն իսկ «ուսթի», աշխատասէր և խնայող երրորդ դասակարգը», որ երբեք չէ մտածել իր վերջնական ազգայնական զգացմունքը հանգրուանացնել հայերին կոտորելու և կողոպտելու մէջ: Եւ այդ դասակարգը միշտ հեռու է եղել ամեն տեսակ ֆաշիստական «շփուկներէ» և ներշնչած «անբաւականութիւններէ», նա համեստ կերպով կատարել է ազգային ոյժերը հաւաքելու և զարգացնելու իսկապէս մեծ գործը, հեռու մնալով զինված համախառնութեան կրօնով չափ չը հասկացված, կիսով չափ էլ աղճատված գաղափարներէր, այն գաղափարներէր, որոնց տխուր հաղորդէ՛ր դուք էք, պ. Աղանիկ:

Sapienti sat!

ԱՆԷՔՍԱՆԴՐՈՊՈՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Շուտով, յունիսի 9-ին, Ալէքսանդրօպոլում կատարվելու են քաղաքային ինքնավարութեան ձայնավարների ընտրութիւնները: Թէպէտ ես ոչ ցանկութիւն և ոչ հնարաւորութիւն ունեմ այսուհետեւ էլ ծառայել քաղաքին քաղաքապետի պաշտօնով, ինչպէս այդ մասին բազմիցս յայտնել եմ մասնաւոր շրջաններում, այնուամենայնիւ քաղաքի գործերը և շահերը, որոնց նուիրել եմ 8 տարի, կը մնան սրտիս այնքան մօտիկ, որքան այժմ, ուստի ես ինձ պարտական եմ համարում հրապարակով մատնացոյց լինել մի քանի թերութիւններին, որ նշարովել են ներկայ կազմի ձայնավարների մէջ, որպէս զի նոր կազմը ապաստ լինի նրանցից: Անում եմ այդ, որովհետեւ ոչ ոքի այնպէս լաւ յայտնի չեն այդ թերութիւնները, ինչպէս ինձ:

Ամենից առաջ աչքի էր ընկնում ձայնավարներից մի քանիսի անտարբեր և անպարտաճանաչ վերաբերմունքը դէպի իրանց կոչումը: Թէ ճվեր են այդպէս եղել, երևում է հետեւեալից: Այժմեան կազմը սկսել է իր պաշտօնավարութիւնը 1901 թ. սեպտեմբերի 4-ին: Մինչև ներկայ մայիսի 26-ը քաղաքային խորհուրդը պէտք է ունենար 84 նիստեր, որոնցից ձայնավարների բացակայութեան պատճառով չեն կայացել 22 նիստ: Ձայնավարները հետեւեալ չափով են այցելել այդ նիստերը. Մ. Տէր-Սարգսեան 79 անգամ, Յ. Բարսեղեան 75, Գ. Ղաւարեան 70, Ա. Գրիգորեան 67, Յ. Գուլբիսիկ 62, Ս. Իսահակեան 62, Հ. Տէր-Ղաւարեան 59, Գ. Տէր-Սարգսեան 59, Կ. Քէշիշեան 57, Ե. Մելիքեան 57, Գ. Իսահակեան 55, Ա. Իսահակեան 52, Ա. Յակոբեան 47, Տ. Իզրաէլեան 44, Ա. Տաշեան 43, Պ. Բէրբեան 43, Յ. Սալաթեան 42, Ա. Ղաւարեան 41, Ա. Գրիգորեան 39, Մ. Տէր-Մարտիրոսեան 39, Հ. Մարտիրոսեան 38, Պ. Ձիթողեան 39, Յ. Ձիթողեան 38, Յ. Գիզաբեան 38, Ն. Ալէքսիսէ 35, Ա. Սահակեան 35, Սարգ. Սողեան 31, Գ. Ստեփանեան 30, Լ. Մերկուրով 29, Գ. Մերկուրով 27, Յ. Տէր-Մարտիրոսեան, 26, Յ. Յակոբեան 25, Վ. Ստեփանեան 21 և Սիմ. Սողեան 19 անգամ:

Ձայնավարների անտարբեր վերաբերմունքի շնորհիւ քաղաքային խորհրդի գործունէութիւնը չ'էր ուղիղ պակաս արդիւնքի է եղել, քան թէ կարող էր լինել: Նիստերից շատ բացակայող ձայնավարներից մի քանիսը ունեցել են յարգելի պատճառներ, ինչպէս օրինակ տըրկարութիւն և քաղաքից բացակայելը երկար ժամանակով: Այդպիսիները յայտնի են տեղիս հասարակութեանը: Երկրորդ կէտը, որ ուշադրութեան արժանի է, այդ քաղաքի բանաւոր և արհեստավոր դասակարգերի քաղաքային խորհրդում. ոչ մի ներկայացուցիչ չ'ունենալն է. ոչ պակաս ուշադրութեան արժանի է և այն թերութիւնը, որ այժմեան ձայնավարներից շատերը կապված են միմեանց հետ ազգակցական և բարեկամական կապերով. կան տոմար և ցեղեր, որոնք 2—3 ներկայացուցիչներ ունեն քաղաքային խորհրդում այն ժամանակ, երբ ամբողջ դասակարգեր չ'ունեն ոչ մի ներկայացուցիչ: Սրա հետեւանքը կարող է լինել խնամիութիւնը, և առաւել եթէ զիմադրութիւնը թուրքային: Խնամիութեան զօգակաւորը շատ չարքանք կարող է առաջ բերել: Բոլորովին ցանկալի չը պիտի համարել, որ ձայնավար լինեն այնպիսի անձինք, որոնք գործ ունեն քաղաքի հետ և որոնց շահերը հակառակ են քաղաքի շահերին: Այդպիսիներ կան այժմ և հետեւանքը քաղաքի գործերի համար անկասկած մնասանկար է եղել և ցանկալի չէ որ այդպէս շարունակվի:

Երկու խօսք էլ ընտրողների թերութեան մասին. դա նրանց անտարբեր վերաբերմունքն է դէպի ընտրութիւնները: Շատերը չեն օգտ-

վում իրանց ունեցած ձայնի իրաւունքից: Դա դատապարտելի է ևս առաւել այժմ, երբ ամեն տեղ պահանջվում է ընդհանուր ձայնատուութեան իրաւունք: Ով ունի հնարաւորութիւն մասնակցելու ընտրութիւններին, պէտք է մասնակցէ և դրանով ապացուցանէ, որ հասունացել է հասարակական գործերը կառավարելու համար: Պէտք է հասկանանք թէ ինչ ժամանակ ենք ապրում:

Օգտվելով դէպքից, հարկ եմ համարում հրապարակով պատասխանել մի հարցի, որի լուծման համար շատերն են դիմել ինձ: Այդ հարցն է. ճիշդ է, որ քաղաքին 12 տարի ծառայողը իրաւունք է ստանում քաղաքից կենսաթոշակ ստանալու իր ունեւի չափով: Օրէնքով կենսաթոշակի նշանակվում է 35 տարի ծառայողին որոշված քանակութեամբ, որ ունեւից շատ պակաս է և 25 տարուց ոչ պակաս ծառայածին նոյն քանակութեան կէսը: Կենսաթոշակը առհասարակ նշանակվում է արքունի գանձարանից: Քաղաքային խորհուրդը իրաւունք ունի, բայց պարտաւոր չէ կենսաթոշակի նշանակելու իր ծառայողին և վերջինիս համար դա մի շնորհ է և ոչ իրաւունք:

Քաղաքապետ Պ. Տէր-Պետրոսեան Ալէքսանդրօպոլ:

ՆԱՄԱԿ ՂԱԶՍԻՑ

Մայիսի 29-ից ես փաստերի հիման վրա եմ խօսում, ես ակնհայտաբան եմ և ակնհայտաբան իրականութեան. հայ ժողովուրդը դաւաճում միտք չ'ունի թուրքի հետ կուռքու. նա դեռ իրան «գոստ» ու «աշխա» է համարում իր հարեան թուրքին և սա էլ նրան, սակայն չար ոգիները չեն դադարում մոլորեցնել նրան: Խուլ և ընդհանուր մի երկիւղ է ընկել բոլորի սրտերը, լարվել է դրութիւնը և կարծես անհաւատութիւնը հետզհետեւ տիրելիս լինի երկու կողմերին. սրանք սպասում են նրանց և նրանք սրանց: Թուրքը միշտ դէմ է սիրելի, իսկ հայը, եթէ ասեմ ոչինչ չ'ունի, պէտք է հաւատարմ:

Թեմիս առաջնորդի պատէքով շրջում էի այս գաւառի գերեզները շատերում: Շատ գերեզում հաշտութեան և եղբայրասիրութեան մասին խօսելով, տեսայ, որ խեղճ ժողովուրդը նոյն իսկ խորհրդի ու միջթարութեան կարօտ է իր հոգեւորականների կողմից, որոնց թիւը թէպէտ շատ է, սակայն չը կան նրանք արհաւիրքներ ու նեղութիւնների բաշխում: Ներկայումս Ղազարում արժանութիւններ տեղի չ'ունեն. մի քանի հայ երիտասարդի դիակ է գտնվել Ղազարում անտառում միայն, բայց սա այն չէ, որին սպասում են, այլ սովորական թշնամութիւն. բայց երկուսը պատել է ամենքին: Եւ այս է պատճառը, որ Ղազարի աչի ընկնող թուրքերն ու հայերը Ղազար քաղաքում մայիսի 29-ին մի ժողով արին քաղաքային այգում և մի յանձնաժողովը ընտրեցին՝ երկու կողմից ևս տաս-տաս հոգի հայ և թուրք, որոնք առնելով գաւառապետ Արնօղի հաւանութիւնն ու աշակցութիւնը, մտան իրանց դերի ու պարտականութեան մէջ, որպէս զի ամեն կերպ աշխատեն խաղաղացնել ազգաբնակչութեանը՝ խրատելով և ազդելով նրանց վրա:

Ծանծաժողովը երբ ներկայացաւ գաւառապետին, հէնց այդ բաշխին վերջինս մի պաշտօնական անձից ստացել էր մի սուտ և սխալ տեղեկութիւն, որ իբր թէ հայ երիտասարդների զինված մի խումբ ժայռերի գլխին նստած հրաձգութեամբ թող չէ տալիս թուրքերին, որ վրաններ դարկեն սովորական տեղերում. սակայն սուտն իսկոյն հերքվեց հէնց այդ պատգամաւոր թուրքերի կողմից, որոնցից ոմանք նոյն իսկ ակնատեսն էին եղել ճիշդ եղելութեանը: Նրանք գաւառապետին յայտնեցին, որ դա մի անամօթ սուտ է, հնարած չար մարդկանցից. ասացին, որ երկուսիւնս այս է, որ մեր թուրքերը արածայրեր էին հայերի խոտաբերները և նրանք, ինչպէս ուրիշ տարիներ, ամենայն իրաւամբ քննել տարել էին թուրքերի ապրանքը և իրանց միտքը ուղղում էին. իսկոյն հաշտութիւն եղաւ: Դաւաճապետը խաղաղվեց և գոհ մնալ ճշմարտութիւնից, բայց ամիսս, որ յիշեալ ստախոս և չարախոս կամ անտեղեակ պաշտօնական չարձակվեց իսկոյն իր պաշտօնից:

Այս մի և նոյն միջոցին մի արեւոտութիւն ընկաւ քաղաքի թուրք ու հայի մէջ. նրանք ընտել էին չար ոգիներին, շէյթանները մէկին, որը ընկել էր թուրք ու հայի մէջ և զրգուտ էր նրանց. ժողովուրդի պահանջով նրան բռնել հրամայեց Արնօղը և բանտարկեցին: Սա մի զբաղել է եղել որ և վաղուց

արձակվել է գաւառապետի հրամանով, որը սակայն շէյթանութեամբ է սկսել պարագիւր: Լուր կայ, որ այդպիսի մի քանի շէյթաններ են մտել թուրքերի մէջ, բայց յուսալի է, որ յանձնաժողովը և գաւառապետը շէյթաններին կաշխատեն շուտ շուտ բռնել:

Յ. Բահ. Զուրուբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ օրը, մայիսի 31-ին, երեկոյան ժամը 8—9-ի ժամանակները պրաւօսլաւնի սեմինարիայի շուրջը և մէջը անգլիկ արմուկ էր բարձրացել: Ուսուցիչներին ու կազակները շրջապատել էին այդ մասի փողոցները: Այդ ժամանակ էլ Երևանի հրապարակի վրա ատրճանակով սպանեցին IV քաղաքամասի մի գործողօյի:

Մայիսի 30-ից Թիֆլիսում է Գանձակի նահանգապետ պ. Լուսոյան:

Մարաբաղի լրագրողները հաղորդում են, որ կեանքն ապահովաբար ընկերութիւններին կենտրոնական վարչութիւնները հրաման են ուղարկել իրանց Կովկասի բաժանմունքներին այլ ևս յանձն չ'ունել ապահովագրել Անդրկովկասի ոստիկանութեան պաշտօնեաներին: Այժմ «Նիւ-Եօրկ» ապահովագրական ընկերութեան Կովկասի գործակալը խնդրել է «Է. Օ.» լրագրին հրատարակել, որ իր ընկերութեան վարչութիւնից ինքն այդպիսի կարգադրութիւն չէ ստացել:

Նոր-Սէնաբի գաւառի Կուրյա գետում ոստիկանութիւնը ձերբակալել է չորս գեղացիներ, մեղադրելով նրանց հակապաշտօնական ագիտացիայի և յանցաւոր գրութիւնների տարածելու մէջ:

Ստացանք հետեւեալ նոր գրքերը. 1) Հեղինէ Մեղիւ-Հայկազեան—«Մի Պոյոյս Ճապոնում», յուշեր և տպաւորութիւններ, հրատարակութիւն «Ա. Լիսիցեան և ընկ.» պատկերազարդ, 192 միջակ էրես, գինը 40 կ. 2) «Ուրիշ գրեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում», հրատարակութիւն Անդրեասնի, 32 միջակ էրես, գինը 10 կ.: 3) Ֆ. Վ. Բելորուս—«Թափառական Բուլղար», պատմութեամբ Բալկանեան ազգերի ապստամբութիւնից, թարգ. Ե. Բահանյան Նալբանդեանի, 187 էրես, գինը 30 կ.:

Նախիջևանի աղէտի զոհերի օգտին ստացանք 1) Ս. Դովլաթեանից 25 րուբլի, 2) Միոնի 5 րուբ. 02., 3) Գ. Տէր-Ղուկասեանից 2 րուբլի: Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 809 րուբլի 97 կոպ.:

Մայիսի 28-ին, ասում է «Черн. Вѣст.», լրագրը, Օգոստոսից 5 վերստ հեռու, Վաշնաբի կոչված վայրում, 5 զինված անձեր կանգնեցնում են Նօթանէրից եկող կառքը և կողոպտում գաւառապետ Կէլբակեանին: Կողոպտողները, մահվան սպանալիք տալով, խլում են գաւառապետի ատրճանակը և զբանները, ետփնջին, երկու ժամացոյցները, գնած զանազան իրերը և անյայտանում:

Լուր է պտտում, ասում է «Է. Ա. Լ. լրագրը, որ Հնուաւոր Արեւելի փոխարքայ գեներալ-ադիւտանտ Ալէքսեյով, ի նկատի առնելով թէ մամուլի և թէ հասարակութեան մէջ եղած մեղադրանքները Հնուաւոր Արեւելի աղմկիւտարացիայի հասցէին ուղղված, խնդրել է, որ իրան թիւյլ տան հրաժարվելու պաշտօնից: Սակայն նրա հրաժարականը չէ ընդունվել, որովհետեւ ներկայումս նրա մասնակցութիւնը պետական գործերում անհրաժեշտ է համարվում:

«НОВОСТИ» լրագիրը լսել է, որ մի քանի բարձրագոյն դպրոցների մայրաքաղաքից հեռացնելու և գաւառական քաղաքները տանելու հարցը մօտ ժամանակներս պէտք է դրական լուծում ստանայ:

ԱՅՈՒՅՆԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիսի 29-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 12-ին, երկրորդ կուսակցիցին սև ամպեր: Սկսեց տեղալ յորդ անձրև և ապա կարկուտ, որի հատիկները կարծես չափ էին: Կարկուտը տեղեւ համարեա կէս ժամ: Փողոցներում հաւաքվեցան կարկուտի կոյտեր, որոնք մինչև երեկոյ հազիւ հալվեցան: Վնասված են քաղաքի շրջակայքում գտնված բանջարանոցները»:

ՂԱՐԱՔԻՆՍԱՅԻՑ մեզ գրում են. «Զանազան տեղերից դիմում են մեզ Ղարաբախի դրութեան, օդի, ջրի և ընդհանրապէս կլիմայի մասին տեղեկութիւններ իմանալու, ուստի պարտք եմ համարում յայտնելու հասարակութեանը, որ շնորհիւ տեղիս պ. պրիստաւի և հասարակական տանտէրի ձեռք առած ամենախիստ միջոցների, միանգամայն ապահով և հանգիստ է Ղարաբախում: Ազգաբնակչութիւնը զուտ հայկական է շրջակայքով: Թէև կան 2—3 թուրքական փոքրիկ անշան գիւղեր, դրանք գտնվում են հեռու և չեն այն արեւմաբարութեամբ, որպիսիք կան Երեւանում, Նախիջևանում և այլ տեղերում: Օդը, ջուրը շատ առողջարար է, անձրևային եղանակի շրջանը անցած պէտք է համարել. սկսվել է բարեհաճող եղանակի շրջանը: Բաւական յարմարութիւն ունեցող բնակարաններ կան: Հետզհետեւ ամեն օր երկաթուղին բեռնում է այլ և այլ կողմերից ամառանոց եկողներին: Ամառանոցները աւելի է ժամ կարելի է ձեռք բերել, քան միւս տեղերում, որովհետեւ 30—40 բնակարաններ աւելացել են և հետզհետեւ աւելանում են: Միջոցներն այնքան էլ թանկ չեն, հացը արժէ 3/4—4 կ. ֆունտը, տաւարի միսը 7 կ., ոչխարին 8—9 կ., գառանը 9—10 կ., իւղը 30 կ., կարագը՝ հալած 35—40 կ., ձուն 100—90 կ.—1 ռ., կաթը շիշը արժէ 6—7 կ.: Երկաթուղին բերում է թէ Երևանից և թէ Թիֆլիսից ամեն օր թարմ մթերքներ և մրգեր և ամեն օր ստացվում են լրագիր և նամակներ: Օրակա, երկու անգամ գալիս գնում է գնացքը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍԱՆԻՑ

Թէհրան, մայիսի 20-ին

1903 թ. սեպտեմբերի տեղիս հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան կողմից տեսուչ է հրաւիրվում նոյն դպրոցների համար պ. Լեւոն Բաբայեան, որի օրով քիչ բարեփոխված ենք տեսնում Թէհրանի հայոց կրթական գործի վիճակը, ուստի աւելորդ չի լինի մի համառօտ ակնարկ զցել այդ դպրոցների վրա:

Ձեռք ուղում ընկել դպրոցների աւելի հեռաւոր անցեալը, որ չափազանց տրեւոյցի է: Նախանցեալ տարիների մանկավարժական ուսուցչական ժողովների արձանագրութիւնները և տեղացիների վկայութիւնները մեզ պատկերացնում են այն անբարեխղճութիւնը և բաբելոնեան խառնակութիւնը, որ տեղի է ունեցել դպրոցներում: Զէ եղել դպրոցում մէկը, որի իրաւասութիւնը ձանաթնա միւսները, ուստի և տրեւելիս է եղել կատարեալ անիշխանութիւն, անհամաձայնութիւն. ուսուցիչներից ով ինչ կամեցել է, անցել է իր առարկայից. եղել են ուսուցիչներ, որոնք բացակայել են 200—250 դաս առանց որ և է յարգելի պատճ: Դի: Կամայականութիւն, խօսքիս կատարեալ իմաստով:

1903/4 ուս. տարում պ. Լ. Բաբայեան հրաւիրվում է կառավարելու դպրոցը՝ պատրաստի ուսուցչական հին կազմի հետ: Զը նայած ուսուցչական այդ կազմի անբարեխղճ տրամադրութեան, տեղին մասամբ աշղոյւտ է կանոնաւորել դասերը, հսկել դասատուութեան և մի կերպ եօլալ սանկ մի չէ ուսումնական տարվայ վերջը: Ուս. տարվայ վերջում տեսուչը արձակում է բոլոր քաղաքից եկող ուսուցիչներին, որոնցով մինչև այդ լցված են եղել տեղիս դպրոցները:

Դա մի չէ տեսնված քան է համարվել Թէհրանի հայ հասարակութեան համար: Առթից օգտվելով, ամեն ոք իր հաշիւները մաքրելու համար կուսակցից է հանդիսանում դպրոցների կապաւորու վարժապետներին: Այդ յուզմունքը շարունակվում է մինչև օրս, որովհետեւ պարսկահայ «Սեմ-մեծամեծներ» չեն կարող տանել այն հանգամանքը, որ մի վարժապետ-սեւսուչ համար ձակվում է հակառակ ընթանալ նրանց կամքին, մասնաւոր դպրոցական գործերում, ուր ամեն բանում դեր է խաղացել իւր քանիւր աղյուսական կամայականութիւնը: Իսկ ներկայ ուսումնական տարվայ համար պ. Լ. Բաբայեան Կովկասից հարկերից ուսուցչական նոր կազմ, կանոնաւորեց դասատուութիւնը, աւանդելի առարկաների որոշ ծրագիր կազմեց, մի շարք բարեփոխումներ մտցրեց: Պէտք է ասել, որ դպրոցները դարձեալ կարօտ են բարեփոխումներին, սակայն դուրի են դրամական միջոցներից:

Այս անգամ նպատակ չ'ունենալով այս խնդիրները վրա երկար կանգ առնել, տեղիս հասարակութեան առաջն եմ դնում մի խիստ կարեւոր հարց,—հոգաբարձութեան հարցը:



